ՃԼԲ. ՏԱՐԻ
CXXXII. JAHRGANG 2018
ՅՈՒՆՈՒԱՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ
JÄNNER-DEZEMBER
ԹԻՒ
HEFT 1-12

HANDES AMSORYA

ZEITSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ABRAHAM TERIAN, The First Two Discourses of the Yačaxapatum as a Single Discourse on the Most Holy Trinity 1

ԳՈՒՐԳԷՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ, Գրաբարի այլ *բառը (Ե. Դար)* 29

SAMVEL GRIGORYAN, Rapport préliminaire sur les inscriptions arméniennes trouvées à Maksutoluğu 59

ՍԵՊՈՒՀ Դ. ԱՍԼԱՆԵԱՆ, Reverendissimi in Christo Patris. Յանձնարարական նամակներ, ցանցեր եւ շարժունակութիւն Թովմա Վանանդեցիի կեանքին մէջ (1677 - 1707) 103

ՄԵՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Առաքել արքեպիսկոպոս Երեւանի եւ Առաքել արքեպիսկոպոս Շուռոթեցի 159

ՍԱՐԳԻՍ Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ, «Ծառ-արեւ» պաշտամունքը եւ դրա դրսեւորումները Ուրարտական արքայանուններում 275

ՀԱՄՕ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ, Նորայայտ փաստաթղթեր Խորհրդային Հայաստանում Հ. Ներսէս Ակինեանի գործունէութեան վերաբերեալ (ծննդեան 135-ամեակի եւ մահուան 55-ամեակի առթիւ) 295

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ, Մարաշի հայութիւնը զինադադարի տարիներուն (անտիպ փաստաթուղթեր) 339

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՐԻԿԵԱՆ, Սկուդրայի վարչական կարգավիճակը Աքեմենեան Պարսկաստանի սատրապական բաժանման համակարգում 361

ՌՈՒԲԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ, Սադուն Բ. Արծրունի իշխանի գործունէութիւնը վիմագիր եւ մատենագիր աղբիւրների մեկնաբանութեամբ 369

ԳԷՈՐԳ ՂԱԶԱՐԵԱՆ, Կոզմա կրօնաւորի «Սենաքսառը» (1203 թ.) 401

VARTAN MATIOSSIAN, ARTSVI BAKHCHINYAN, The Beginnings of the "Persian Dancer" Armen Ohanian in Iran (1906-1910) 439

ՍԵԴԱ Տ. ՕՀԱՆԵԱՆ, Հայաստանի հանրապետութեան խորհրդարանի հայուհի պատգամաւորներ 475

ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ, Հայաստանի հանրապետութեան անկումէն ետք վտարանդի մտաւորականներու գործունէութիւնը Սուրիոյ մէջ 491

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼԲԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏՈՎ
THIS PUBLICATION HAS BEEN SUBSIDED BY
THE GALOUSTE GULBENKIAN FOUNDATION
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ
ՎԻԵՆՆԱ – ԵՐԵՒԱՆ, 2018

Herausgeber, Eigentümer und Verleger:
Mechitharisten-Congregation, 1070 Wien, Mechitaristengasse 4
Redaktion: P. Paul Kodjanian. Fürden Inhalt verantwortlich: Erzb. Levon Zekian.
Alle 1070 Wien, Mechitaristengasse 4

ՍԿՈՒԴՐԱՅԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԱՔԵՄԵՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Յովհաննէս Խորիկեան

Յոյն պատմիչ Հերոդոտոսը, թուարկելով Աքեմենեան Պարսկաստանի քսան սատրապութիւնները եւ դրանց վճարած հարկաչափը, գրում է, որ «ահա այս հարկերն էին գալիս Դարեհին Ասիայից եւ Լիբիայի մի փոքր հատուածից: Ժամանակ անց հարկ է ստացուում նաեւ կղզիներից ու Եւրոպայում մինչեւ Թեսսալիա *(ընդգծումը մերն է - Յ. Խ.) ապրողներից»*[1]*: Այս վերջին տեղեկութեան մէջ «ժամանակ անց»-ը ցոյց է տալիս, որ մինչեւ յունական կղզիների, Թրակիայի ու Մակեդոնիայի նուաճումը, Դարեհ Ա-ի վարչական վերափոխումներն արդէն կատարուած իրողութիւն էին, եւ այդ իրողութիւնն արտացոլուած էր Հերոդոտոսի մօտ պահպանուած սատրապութիւնների ցուցակում: Յունական կղզիները՝ Սամոսը, Լեմնոսը, Քիոսը, նուաճուել են մօտ Ք. ա. 517 թ., եւ մօտաւորապէս Ք. ա. 517 թ. նուաճուել է նաեւ Հնդկաստանի հիւսիսարեւմտեան մասը*[2]*: Ժամանակին կարծիք ենք յայտնել*[3]*, որ Ք. ա. մօտ 513/512 թթ.*[4] *Մակեդոնիան*[5] *եւ Թրակիան կազմել են մէկ սատրապութիւն՝ Սկուդրա անուանումով*[6]*, այն դէպքում, երբ համապետական բնոյթի վարչական վերափոխումներն արդէն կատարուել էին: Ք. ա. 492 թ. Մարդոնիոսի արշաւանքով Մակեդոնիան էլ աւելի ամուր թելերով է կապուել պարսից գերիշխանութեանը:*

Դարեհ Ա-ի Նաղշէ-Ռոստամի (DNa) արձանագրութիւնում արդէն Հնդկաստանը եւ Մակեդոնիան ու Թրակիան ընդգրկող Սկուդրա սատրապութիւնը յիշատակւում են միասին[7]*: Յոնիային նուի-*

---

1 **Հերոդոտոս**, *Պատմութիւն ինը գրքից*, թարգմանութիւնը **Ս. Կրկեաշարեանի** (այսուհետեւ՝ Հերոդոտոս), Երեւան, 1986, III, 96; VII, 108:

2 **М. А. Дандамаев**, *Политическая история Ахеменидской державы*, Москва, 1985, с. 108-109.

3 **Յ. Խորիկեան**, *Սատրապութիւնների հերոդոտեան ցուցակը (Պատմաշխարհագրական քննութիւն)*,- «Հայկազեան հայագիտական հանդէս», հտ. ԼԴ., Պէյրութ, 2014, էջ 147-148:

4 Հմմտ. **Т. Ю. Шашлова**, *Фракийцы как подданные ахеменидов (по данным персидских источников)*, Известия Саратовского университета. Новая серия. Серия: История. Международные отношения, 2014, Т. 14, вып. 4, с. 49; J. **P. Stronk**, *Crossing the Straits: The Persians in Thrace*, Talanta, 30-31, 1998-1999, p. 65; **E. Rehm**, *The Impact of the Achaemenids on Thrace: A Historical Review*,- "Achaemenid Impact in the Black Sea: Communication of Powers", edited by J. Nieling and E. Rehm, Aarhus University Press, 2010, p. 140; **M. I. Vasilev**, *The Policy of Darius and Xerxes towards Thrace and Macedonia*, Leiden, Boston, 2015, p. 59:

5 Հմմտ. **Հերոդոտոս**, V, 17-20; VI, 44; VIII, 140-142:

6 **М. А. Дандамаев**, Политическая история Ахеменидской державы, с. 111; **A. T. Olmstead**, *History of the Persian Empire*, Chicago, 1960, pp. 157-158; **M. Brosius**, *Pax Persica and the Peoples of the Black Sea Region: Extent and Limits of Achaemenid Imperial Ideology*, "Achaemenid Impact in the Black Sea: Communication of Powers", edited by J. Nieling and E. Rehm, Aarhus University Press, 2010, p. 31; **M. I. Vasilev**, *The Policy of Darius and Xerxes towards Thrace and Macedonia*, p. 114.

7 **R. Kent**, *Old Persian. Grammar. Texts. Lexicon*, 2nd ed., New Haven, 1953, p. 137. Դարեհ Ա-ի DSe, DSm արձանագրութիւններում եւ հիերոգլիֆ արձանագրութիւնում (տե՛ս **J. Yoyotte**, *Les inscriptions hiéroglyphiques. Darius et l'Égypte*, Journal Asiatique, t. 260, Paris, 1972, f. 3-4 p. 258; **M. Roaf**, *The Subject Peoples on the Base of the Statue of Darius, Cahiers de la Délégation Archéologique Française en Iran*, 4, 1974, p. 75), ինչ-

րուած մեր յօդուածում քննարկել ենք հին պարսկական սեպագիր արձանագրութիւններում յիշատակուող աշխարհագրական բառակապակցութիւնների նոյնականացման եւ տեղագրութեան հարցերը[8], հետեւաբար՝ ստորեւ փորձենք առաւել հիմնաւորել Սկուդրա սատրապութեան գոյութեան հարցը:

Մասնագիտական գրականութեան մէջ Սկուդրա սկիւթական անուանումով[9] առանձին սատրապութեան գոյութեան հարցը տարակարծութիւնների տեղիք է տուել: Այսպէս, ենթադրուել է, որ Skudra *անուան տակ սեպագիր արձանագրութիւնը նկատի է ունեցել Թրակիայում ապրող սկիւթական ցեղերին[10] կամ պայոններին, թրակացիներին ու մակեդոնացիներին[11]: Աքեմենեանների բարձրաքանդակներում սկուդրացիները պատկերուած են իրանական կամ սկիւթական զգեստներով[12], այսինքն՝ էթնիկական առումով Սկուդրան պէտք է ընդգրկէր Թրակիան: Հնչել է նաեւ կարծիք, որ Թրակիայի փռիւգիական հին անուանումը եղել է Սկուդրա[13]: Որոշ ուսումնասիրողներ Սկուդրայի եւ Թրակիայի նոյնացումը բացառում են՝ առաջինը տեղադրելով նոյնիսկ Փոքր Ասիայի արեւմուտքում կամ կենտրոնական շրջանում[14] կամ էլ Էգէյեան ծովի յունական ափից հիւսիս ընկած շրջաններում[15]: Ընդգծելով Սկուդրա անունը զուգահեռաբար հանդիպում է Բալկանների հիւսիսում[16], յիշատակւում է բրիգների Կիւդրա քաղաքը[17], Փոքր Ասիայում՝ Փռիւգիայի Կիւդրարա քաղաքը[18],*

պէս նաեւ Քսերքսէսի XPh արձանագրութիւնում Սկուդրան նոյնպէս յիշատակւում է (**R. Kent**, *Old Persian*, pp. 142, 145, 151):

8 **Յ. Խորիկեան**, *Յոնիան Աքեմենեան Պարսկաստանի վարչական համակարգում*,- «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երեւան, 2014, թիւ 1-12, էջ 469-484:

9 **Ch. Tuplin**, *Revisiting Dareios' Scythian Expedition*,- "Achaemenid Impact in the Black Sea: Communication of Powers", edited by J. Nieling and E. Rehm, Aarhus University Press, 2010, pp. 297, 300. Սկուդրա անունը, թերեւս, նոյնական է Մուրաշուի արխիւներում յայտնի *Iskudurū* (*Uskudurū*) անձնանունանը (տե՛ս **W. F. M. Henkelman, Stolper M. W.**, *Ethnic identity and the ethnic labelling at Persepolis : the case of the Skudrians*,- "Organisation des pouvoirs et contacts culturels dans les pays de l'empire achéménide", ed. by. P. Briant, M. Chauveau, Persika 14, Paris, 2009, pp. 288-289):

10 **O. Szmerényi**, *Four Iranian ethnic names: Scythian-Skudra-Sogdian-Saka*, Wien, 1980, pp. 23-25; **S. Kullanda**, *External relations of Scythian*,- "Вопросы языкового родства: Международный научный журнал", № 11, Москва, 2014, с. 85-87. Փորձել են նոյնիսկ Սկուդրան տեղադրել Վրաստանի տարածքում (տե՛ս **G. Gropp**, *Sassen die Skudra wirklich in Thrakien? Ein Problem der Satrapienverteilung in Kleinasien*,- "Achaemenid Anatolia", ed. T. Bakır, 2001, Leiden, pp. 37-42): Հիմնաւորուած չէ նաեւ Սկուդրայի եւ Պափլագոնիայի նոյնացումը (տե՛ս **Gropp Von G.**, *Die Darstellung der 23 Volker auf den Reliefs des Apadana von Persepolis*, Iranica Antiqua, 44, 2009, pp. 337-338):

11 **M. I. Vasilev**, *The Policy of Darius and Xerxes towards Thrace and Macedonia*, p. 120.

12 **S. Kullanda**, *External relations of Scythian*, p. 85; **M. Roaf**, *The Subject Peoples on the Base of the Statue of Darius*, p. 91.

13 **A. Fol, G. L. Hammond**, *Persia in Europe, apart from Greece*,- "The Cambridge Ancient History", Vol. IV, Cambridge University Press, 1988, p. 246; **G. D. Bacheva**, *Detecting a Satrapy: The Skudra Case*, Thracia XX, Sofia, 2012, p. 11.

14 **M. Vassileva**, *Persians in Thrace, A Companion to Ancient Thrace*, ed. by J. Valeva, E. Nankov, D. Graninger, Chichester, 2015, p. 322.

15 **J. P. Stronk**, *Crossing the Straits: The Persians in Thrace*, p. 66.

16 **Claudii Ptolemaei** *Geographia*, edidit C. F. A. Noebbe, t. I, Lipsiae, 1843, III, 13, 39, p. 199. Սկուդրան նոյնացուել է նաեւ Ք. յ. ԺԳ. դարից յայտնի բիւզանդական Սկուտարին (ներկայիս Ուշկիւդարը՝ Ստամբուլի ասիական մասը), տե՛ս **W. F. M. Henkelman, M. W. Stolper**, *Ethnic identity and the ethnic labelling at Persepolis*, p. 299):

17 **Страбон**, *География в 17 книгах* (перевод, статья и комментарии Г. А. Стратановского), Л., 1964, с. 298.

18 **Herodotus**, with an English translation by A. D. Godley, Vol. III. Books V-VII, Cambridge-Massachusetts-London, 1938, Loeb Classical Library, VII, 30, p. 344.

այդուհանդերձ, տեղանունը Թրակիական չի համարւում[19]:

Համաձայն մէկ այլ կարծիքի՝ Սկուդրան՝ որպէս սատրապութիւն, ընդգրկել է միայն եւրոպական Թրակիան, որի սահմանն արեւմուտքում հասնում էր մինչեւ Թերմաիկոսի ծոցը[20], այսինքն՝ ժամանակակից Թուրքիայի եւրոպական մասը եւ Բուլղարիայի արեւելեան հատուածը[21], այն դէպքում, երբ վասալական Մակեդոնիան պահպանել էր Թագաւորական իշխանութիւնը[22]: Սակայն Թագաւորական իշխանութեան պահպանումը չէր նշանակում, որ տուեալ երկիրն առանձին սատրապութիւն կամ էլ որեւէ սատրապութեան մաս չէր: Համեմատութեան համար նշենք, որ XIII սատրապութեան մէջ ներառուած Հայաստանը շարունակեց պահպանել Թագաւորական իշխանութիւնը, ընդ որում՝ հէնց Թագաւորները յաճախ սատրապներ էին:

Ուսումնասիրողների համար մտորումների տեղիք է տուել նաեւ իրողութիւնը, որ յոյն հեղինակները Էգէյեան ծովի հիւսիսային մերձափնեայ շրջաններում պարսից զօրավարներին յիշատակում են որպէս հիւպարքոսներ եւ ստրատեգոսներ, որոնք իրենց գործառոյթներով զիջում էին սատրապներին: Կրկին համեմատութեան համար նշենք, որ Արեւմտեան Հայաստանի հիւպարքոս Տիրիբազոսն իր իրաւասութիւններով չէր զիջում սատրապին[23], հետեւաբար՝ ռազմաքաղաքական առումով անկայուն այս շրջաններում չի կարելի բացառել սատրապութեան գոյութիւնը: Տեղին է նշել, որ Հերոդոտոսը յայտնում է, որ Կամբիւսեսը Եգիպտոսի հիւպարքոս էր նշանակել Արիւանդէսին[24], այսինքն, եթէ նկատի ունենանք, որ VI սատրապութիւնը լայն առումով յայտնի էր որպէս եգիպտական սատրապութիւն, ապա Արիւանդէսը Եգիպտոսի սատրապն էր: Սակայն այստեղ խնդիրն այն է, որ Արիւանդէսը երկրի, ոչ թէ քաղաքի կամ շրջանի հիւպարքոսն էր:

Հիմնաւոր չէ նաեւ այն կարծիքը, որ Սկուդրայի վարչական կենտրոնը եղել է Սեստոսը (ներկայիս Աղբաշ ամրոցի մօտ[25] կամ էլ ներկայիս Զեմենիկը[26]), իսկ Արտայուկտէսը[27] նրա սատրապներից մէկն էր[28]: Հերոդոտոսի տեղեկութիւնը նման եզրակացութեան հիմք չի տալիս, քանի որ Արտայուկտէսը պարզապէս Սեստոսի կառավարիչն է եղել՝ ենթարկուելով սատրապին, իսկ Սեստոսը աշխարհագրական առումով չէր կարող Սկուդրայի վարչական կենտրոնը լինել: Արտայուկտէսը հիւպարքոս էր, ինչպէս Դորիսկոսի հիւպարքոս Մասկամէսը, Էյոնի հիւպարքոս Բոգէսը[29]: Այս դէպքում հիմնաւոր չէ նաեւ ենթադրել, որ Թրակիական սատրապութիւնը կոչւում է իր կենտրոնի՝ Սեստոսի անունով[30]: Հե-

19 **M. Vassileva**, *Persians in Thrace*, p. 322. Սկուդրացիների նոյնացումը եւ տեղորոշումը Փռիգիայում, Լիւդիայում, Բիւթանիայում մեզ համար ընդունելի չէ, չնայած այն հանգամանքին, որ յոյների համար թրակացի համարուողները պարսիկների կողմից սկուդրացիներ էին ընկալւում (տե՛ս **W. F. M. Henkelman, M. W. Stolper**, *Ethnic identity and the ethnic labelling at Persepolis*, pp. 293-299):

20 **D. Boteva**, *Re-reading Herodotus on the Persian Campaigns in Thrace*, - "Herodotus and the Persian Empire", ed. R. Rollinger, B. Truschnegg, R. Bichler, Wiesbaden, 2011, p. 736.

21 **O. Szemerényi**, *Four Iranian ethnic names*, p. 26.

22 **M. Vassileva**, *Persians in Thrace*, p. 322.

23 Տե՛ս **Քսենոփոն**, *Անաբասիս*, թարգմ. **Ս.** Կրկեաշարեանի, Երեւան, 1970, էջ 93:

24 **Herodotus**, with an English translation by A. D. Godley, Vol. II, Cambridge-Massachusetts-London, 1928, Loeb Classical Library, IV, 166, p. 370.

25 **G. D. Bacheva**, *Detecting a Satrapy*: *The Skudra Case*, p. 12.

26 **J. P. Stronk**, *Crossing the Straits: The Persians in Thrace*, p. 62.

27 **Հերոդոտոս**, VII, 33; 78; IX, 115-116; 119:

28 **J. M. Balcer**, *Persian Occupied Thrace (Skudra)*, Historia: Zeitschrift für Alte Geschichte, Bd. 37, H. 1, 1988, pp. 1, 3.

29 **Հերոդոտոս**, VII, 105-107:

30 **J. Balcer**, *Persian Occupied Thrace (Skudra)*, p. 4.

տաքրքիր է նաեւ այն տեսակէտը, ըստ որի Թրակիան, որպէս ծայրամաս (բնականաբար նկատի ունենանք նաեւ Մակեդոնիան), առանձին սատրապութիւն չի կազմել եւ ղեկավարուել է Սարդէսից[31]: Նման կարծիքի կարող է մղել այն հանգամանքը, որ, օրինակ՝ եգիպտական սատրապութեան մաս կազմող լիբիացիները (Փուտ-Լիբիա), եթովպացիները (Քուշ-Նուբիա) պարսկական սեպագիր արձանագրութիւններում յիշատակւում են առանձին-առանձին սահմանային շրջաններ[32], այն դէպքում, երբ դրանք մտել են VI սատրապութեան մէջ, այսինքն՝ եւրոպական Թրակիան կարող էր սատրապութեան մաս կազմել[33]: Սակայն, մեր կարծիքով, Հերոդոտոսի վերոնշեալ տեղեկութիւնը՝ «Եւրոպայում մինչեւ Թեսսալիա», *յստակ սահմանագծում է մէկ այլ, տուեալ դէպքում՝ Սկուդրա սատրապութեան գոյութիւնը, որի կենտրոնը ենթադրուել է Ֆիլիպուպոլիսը՝ ներկայիս Պլովդիւը[34]:*

Այս սատրապութիւնը, յատկապէս՝ Արեւմտեան Թրակիան, յայտնի էր նաեւ ոսկու հարուստ հանքերով[35], ինչը պարսիկների համար կարեւոր նշանակութիւն ունէր յետագայ ռազմաքաղաքական ձգտումներում: Սկուդրացիները, որպէս գիւղատնտեսական աշխատողներ, յիշատակւում են Դարեհ Ա-ի Պարսքի եւ Էլամի արքայական կալուածքներում[36]:

Այսպիսով, Սկուդրան կարող ենք համարել Աքեմենեան տէրութեան XXI սատրապութիւնը:

31 Նոյն տեղում, էջ 11, 15, 19-20: Հմմտ. **E. Rehm**, *The Impact of the Achaemenids on Thrace*, pp. 150-151:

32 **G. D. Bacheva,** *Detecting a Satrapy: The Skudra Case*, p. 21.

33 **J. P. Sronk**, *Crossing the Straits: The Persians in Thrace*, p. 68.

34 **M. Brosius**, *Pax Persica and the Peoples of the Black Sea Region*, p. 31; **M. I. Vasilev**, *The Policy of Darius and Xerxes towards Thrace and Macedonia*, p. 121.

35 **J. Balcer**, *Persian Occupied Thrace (Skudra)*, p. 11.

36 **Т. Ю. Шашлова**, *Фракийцы как подданные ахеменидов*, с. 48; **M. Vassileva**, *Persians in Thrace*, p. 322; **E. Rehm**, *The Impact of the Achaemenids on Thrace*, p. 148.